

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՒՋՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ

ՎՃՌԱԲԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՁԵՎ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.04 – Դատական իրավունք (դատարանակազմություն,
քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,
կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն,
օպերատիվ հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2016

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

СУДЖЯН ТАТЕВИК ОГАНЕСОВНА

КАССАЦИЯ КАК ФОРМА ПЕРЕСМОТРА СУДЕБНЫХ АКТОВ В
УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.04 – Судебное право (судоустройство, гражданский процесс,
уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория
оперативно-розыскной деятельности)

Ереван-2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Վ.Գ. Ենգիբարյան իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ.Զ. Ավետիսյան
Առաջատար կազմակերպություն՝	ՀՀ ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է նոյեմբերի 12-ին՝ ժամը 11⁰⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ԲՈՂ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Մեղմագիրն առաքված է 2016թ. հոկտեմբերի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա.Ա.Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор Г.С. Казинян

Официальные оппоненты: доктор юридических наук, доцент В.Г. Енгибарян
кандидат юридических наук, доцент Д.З. Аветисян

Ведущая организация: Образовательный комплекс Полиции РА

Защита состоится 12-ого ноября в 11⁰⁰ часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 12-ого октября 2016 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент

А.А. Манасян

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Դատական ակտ կայացնելիս դատական սխալներ թույլ տալու օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալների առկայությունը և ըստ այդմ՝ օրինականության և հիմնավորվածության պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելու հնարավորությունն օբյեկտիվ անհրաժեշտություն են դարձնում դատական վերանայման տարբեր ձևերի գոյությունը ժամանակակից քրեադատավարական համակարգերում: Դատական վերանայման այդ ձևերի շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում վճռաբեկությունը, որը կոչված է լուծելու ոչ միայն դատական սխալների ուղղման, այլ նաև միասնական դատական պրակտիկա ձևավորելու կարևորագույն խնդիրը:

Հայրենական քրեական դատավարությունում վճռաբեկության ինստիտուտը ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) սկզբնական խմբագրությունից մինչև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ նաև՝ Նախագիծ) դրա վերաբերյալ կարգավորումների սահմանումը ենթարկվել է էական փոփոխությունների՝ նախատեսելով թե գործառությանին և թե ինստիտուցիոնալ առումով տարբեր մոդելներ:

Վերանայման այս ձևի գործառությանին դերի նորովի ընկալման համար բեկումնային նշանակություն ունեցավ 2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Վճռաբեկ դատարանի (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան) նոր՝ օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրաիրավական գործառույթի նախատեսումը: Վճռաբեկ դատարանի այդ նոր սահմանադրաիրավական կարգավիճակով պայմանավորված՝ վճռաբեկության գործառությանին դերը, վճռաբեկ վերանայման՝ դատական սխալների ուղղման և միասնական դատական պրակտիկայի ապահովման խնդիրների հարաբերակցությունը գիտական հանրության և պրակտիկ իրավաբանների շրջանում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք էր տալիս: Իսկ վճռաբեկության գործառությանին դերի հստակեցումից է մեծապես կախված վճռաբեկ վերանայման մեխանիզմի արդյունավետ օրենսդրական կանոնակարգումը: Այսպես, օրինակ, նույն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական գործառույթը հանգեցրել է վճռաբեկ վերանայման մեխանիզմի բովանդակային այնպիսի փոփոխության, ինչպիսին վճռաբեկ բողոքարկման թույլատվական (դիսկրեցիոն) կարգն է, որն առաջին հայացքից կարող է հակասության մեջ մտնել դատական սխալների ուղղման խնդրի հետ:

Խնդրի արդիականության մասին է վկայում հստակ մոտեցումների բացակայությամբ պայմանավորված՝ ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում առաջարկվող՝ համակարգային փոփոխություն կատարելու, այն է՝ ե-

ռաստիճան դատական համակարգից երկաստիճան դատական համակարգին անցնելու գաղափարը, որից, սակայն, 2016 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը հրաժարվել է և գնացել Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի հստակեցման ճանապարհով: Վճռաբեկ դատարանի այս նոր սահմանադրաիրավական կարգավիճակը գիտական մակարդակով վերլուծելու, դրանով պայամանավորված վճռաբեկության գործառույթային դերը և դրա առջև դրված խնդիրները հստակեցնելու, այդ խնդիրների ողջամիտ հավասարակշռության ապահովմանն ուղղված օրենսդրական կարգավորումներ առաջարկելու անհրաժեշտությունը վկայում են սույն հետազոտության արդիականության մասին:

Վճռաբեկության ինստիտուտի օրենսդրական առանձին կարգավորումների գործողության ընթացքում ի հայտ եկած բազմաթիվ խնդիրներ քննարկման առարկա են դարձվել բարձրագույն դատական ատյանների՝ ՀՀ սահմանադրական դատարանի (այսուհետ նաև՝ Սահմանադրական դատարան) և Վճռաբեկ դատարանի որոշումներում: Բացի այդ, որոշակի կարգավորումներ, ի համեմատ դրանց սկզբնական խմբագրության, չնայած ենթարկվել են էական փոփոխությունների և լրացումների, այդուհանդերձ բավարար չափով չեն երաշխավորում արդար դատաքննության իրավունքի համատեքստում վճռաբեկ վերանայման հիմնարար իրավունքը, իսկ գործնականում առաջացող մի շարք խնդիրներ դեռևս մնում են չլուծված: Դեռ ավելին, երբեմն ինքնին օրենսդրական փոփոխությունները և լրացումները խորացրել են առկա խնդիրները: Ասվածի վառ օրինակ կարող են լինել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ին ընդունված թիվ ՀՕ-48-Ն օրենքով կատարված փոփոխությունները, որոնց արդյունքում դատական սխալի իմաստով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը նույնացվեցին վերաքննիչ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերի հետ, ինչը վճռաբեկության մեխանիզմում վերաքննության տարրերի անհարկի ընդլայնման դրսևորում է: Դեռ ավելին, վերոհիշյալ փոփոխությունը չլուծեց և նույնիսկ ավելի խորացրեց վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգի հետ կապված՝ գործնականում առաջացող խնդիրները: Նույն օրենքով ներմուծվեց դատավարության մասնակիցների կողմից բացառապես փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու օրենսդրական պահանջը, որը ՀՀ Սահմանադրական դատարանի 2015 թվականի մարտի 17-ի թիվ ՄԴՌ-1196 որոշմամբ ճանաչվեց ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Իսկ օրենսդրական բարեփոխումների ձախողումը, ի թիվս այլոց, շատ հաճախ պայմանավորված է դրանց տեսական և գործնական հիմնավորվածության բացակայությամբ: Այլ կերպ՝ դատական վերանայման այս ինստիտուտի հետ կապված արդյունավետ օրենսդրական կարգավորումներ առաջարկելու համար անհրաժեշտ է նախ և ա-

ռաջ խոր վերլուծության ենթարկել և գիտականորեն հիմնավորել դատական ակտերի վերանայման այս ձևի իրավական էությունը, վեր հանել առկա տեսական և գործնական խնդիրները և դրանց համահունչ օրենսդրորեն կանոնակարգել դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման և վճռաբեկ բողոքների քննության ու լուծման հետ կապված խնդիրները:

Քրեադատավարական այս ինստիտուտը բովանդակային փոփոխությունների է ենթարկվել Նախագծում: Նախագծում առկա օրենսդրական նոր կարգավորումները գիտական քննարկման առարկա դարձնելու, դրանց գիտական հիմնավորվածության և գործնական արդյունավետության վերլուծություն իրականացնելու, այդպիսիք գործող օրենսդրական կարգավորման հետ համեմատախրավական վերլուծության ենթարկելու, Նախագծով սահմանված կարգավորումները կատարելագործելու անհրաժեշտությունը ևս վկայում են սույն հետազոտության արդիականության մասին:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Վճռաբեկ վերանայման հիմնախնդիրները հետազոտության են ենթարկվել խորհրդային և ժամանակակից դատավարագետների գիտական աշխատություններում: Հետազոտության թեմային առնչվող հիմնախնդիրները մի շարք դեպքերում դարձել են նաև գիտական ատենախոսությունների ուսումնասիրության առարկա: Այդ ուսումնասիրությունների շարքում հատկապես պետք է ընդգծել Ռ.Ն.Մելիքյանի, Է.Ֆ.Կուցովայի, Մ.Մ.Գրոդզինսկու, Ն.Ն.Կովտունի, Ի.Յա.Ֆոյնիցկու, Վ.Բ.Կալմիկովի, Օ.Ա. Սուխովայի և այլոց աշխատությունները: Չնայած այդ ամենին՝ հարկ է նկատել, որ վճռաբեկության ինստիտուտի հիմնախնդիրները հայրենական դատավարագիտության մեջ դեռևս լիարժեք կերպով ուսումնասիրված չեն:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտը դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման և վերանայման առնչությամբ ծագող դատավարական հարաբերություններն են:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման և վերանայման հարաբերությունները կարգավորող իրավական նորմերն են, Նախագծի կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը վճռաբեկության ինստիտուտի հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և դրա հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակումը: Նշված նպատակը ենթադրում է լուծել հետևյալ խնդիրները.

- սահմանել վճռաբեկության՝ որպես դատական ակտերի վերանայման ձևի հասկացությունը՝ սահմանազատելով դատական ակտերի վերանայման մյուս ձևերից.

- հստակեցնել վճարելիության գործառույթներն ու խնդիրները, դատական վերանայման այս ձևի տեղը դատական վերանայման համակարգում.

- վեր հանել վճարելի բողոքարկման հիմքերի, ժամկետների, վճարելի բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի, վճարելի բողոքարկման դատավարական կարգի, վճարելի բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգի, վճարելի վերանայման սահմանների, վճարելի դատարանում գործերի քննության և լուծման կարգի, վճարելի դատարանի լիազորությունների վերաբերյալ տեսական և գործնական խնդիրները՝ ուսումնասիրելով դրանց առնչությամբ ձևավորված դատական պրակտիկան,

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել վճարելիության ինստիտուտի օրենսդրական կատարելագործման առաջարկներ,

- կատարված գիտական վերլուծության լույսի ներքո վերլուծել և մեկնաբանել Նախագծում տրված կարգավորումները,

- համեմատախրավական վերլուծության ենթարկել գործող օրենսգրքով և Նախագծով վճարելիության ինստիտուտի օրենսդրական կարգավորումը, հիմնավորել Նախագծով կատարված փոփոխությունների առաջնայնությունը և ներկայացնել առաջարկություններ Նախագիծն առավել կատարելագործելու ակնկալիքով:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքը ձևավորվել է քրեական դատավարությունում վճարելիության ինստիտուտին նվիրված հայրենական և արտասահմանյան աղբյուրներից: Դրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել Գ.Ս.Ղազինյանի, Ռ.Ն.Մելիքյանի, Է.Ֆ.Կուցովայի, Մ.Մ. Գրոդզինսկու, Ս.Ս.Ստրոգովիչի, Ի.Յա.Ֆոյնիցկու, Ն.Ն.Կովտունի, Վ.Ս.Գոլովկոյի, Վ.Բ.Կալմիկովի, Օ.Ա.Սուխովայի, Ն.Վ.Լանտուխի, Մ.Ֆ.Ջիրոմի, Ջ.Ա.Ջոլովիչի և այլոց աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են վճարելիության ինստիտուտին առնչվող ՀՀ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճարելի դատարանի դատական ակտերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության նպատակով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդների օգտագործմամբ:

Հետազոտության գիտական նորույթը:

Թեև վճարելիության ինստիտուտին առնչվող որոշ հիմնախնդիրներ հետա-

գոտության են ենթարկվել մի շարք դատավարագետների աշխատանքներում, այդուհանդերձ, հայրենական իրավագիտության մեջ դեռևս բացակայում են այս ինստիտուտի ուսումնասիրությանը նվիրված համընդգրկուն աշխատություններ: Հետազոտության գիտական նորույթն այն է, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել ու վերլուծել վճռաբեկության ինստիտուտի տեսական և գործնական հիմնախնդիրները: Ընդ որում, նշված վերլուծությունները կատարվել են՝ հիմնվելով Օրենսգրքի և Նախագծի, առանձին օտարերկրյա պետությունների քրեադատավարական օրենսդրությունների համեմատախրավական վերլուծության, տարբեր աղբյուրներում տեղ գտած կարծիքների, Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշումների, Վճռաբեկ դատարանի դատական ակտերի համակարգային ուսումնասիրության վրա: Հետազոտվել են հայրենական դատավարական գրականության մեջ ոչ ամբողջովին ուսումնասիրված կամ գրեթե չուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են վճռաբեկության գործառույթային դերը, վճռաբեկ վերանայման հայեցողական (դիսկրեցիոն) բնույթը, վճռաբեկության սահմանները և այլն: Արդյունքում կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական առաջարկներ: Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանը վերաբերող առաջարկներում:

Պաշտպանության առաջ քաշվող դրույթները:

1. Վճռաբեկության՝ արդարադատության և օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթների հարաբերակցության հարցը քննարկելիս, հակառակ դրանցից մեկին մյուսի նկատմամբ առաջնայնություն տալու վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ տեղ գտած մոտեցումների, անհրաժեշտ է հիմք ընդունել այն գաղափարը, որ նշված գործառույթների արդյունքը, այն է՝ անձի հիմնարար իրավունքներին առնչվող դատական սխալների ուղղումը և միասնական դատական պրակտիկայի ապահովումը ոչ միայն չեն փոխբացառում, ավելին՝ լրացնում են միմյանց:

2. Թեև Վճռաբեկ դատարանի՝ իրավունքի զարգացման գործառույթն ուղղակի սահմանադրական ամրագրում չի ստացել, սակայն միասնական դատական պրակտիկայի ապահովման գործառույթի շրջանակներում դատական ակտերի վճռաբեկ վերանայման արդյունքն ինքնըստինքյան կարող է լինել նաև իրավունքի զարգացումը: Ընդ որում, թեև Հայաստանի Հանրապետությունը պատկանում է գրված իրավունքի համակարգ ունեցող երկրների թվին, այդուհանդերձ, դա չի բացառում, ավելին՝ իրավական ինտեգրման առկա պայմաններում պայմանավորում է դատական նախադեպեր ստեղծելու ճանապարհով իրավունքի զարգացման գործառույթի շրջանակներում

իրավակարգավորման բացերի լրացումը:

3. Վճռաբեկ դատարանի կողմից իր սահամանադրական առաքելության իրականացման արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է նաև վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմամբ: Քանի որ վճռաբեկ բողոքարկման առարկայի մոտ 40%-ը կազմում են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդյունքում կայացված գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ուստի, Վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված արդյունավետ միջոց կարող է լինել մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետության բարձրացումը, ինչին կարելի է հասնել նախ և առաջ դատական վերահսկողության իրականացնող մասնագիտացված դատարաններ ստեղծելու ճանապարհով: Նման կարգավորումների պարագայում անգամ կարելի է գործն ըստ էության չլուծող դատական ակտերը բացառել վճռաբեկ բողոքարկման առարկայից: Մյուս կողմից՝ հաշվի առնելով նաև գործն ըստ էության չլուծող դատական ակտերի առնչությամբ օրենքի միատեսակ մեկնաբանության ապահովման անհրաժեշտությունը՝ խնդրի լուծման հնարավոր մոդել կարող է լինել կիրառման ենթակա նորմի մեկնաբանություն ստանալու համար Վճռաբեկ դատարանին դիմելու ընթացակարգի նախատեսումը:

4. Վճռաբեկ բողոքարկման մատչելիության ապահովման տեսանկյունից կարևոր է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և վարույթ ընդունելը մերժելու միասնական դատական պրակտիկայի ձևավորումը: Նշված խնդիրը կարող է լուծվել ոչ թե վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումները պատճառաբանելով, այլ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը հստակեցնելով և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը պատճառաբանելու պահանջ նախատեսելով, ինչն առավել կանխատեսելի կդարձնի վճռաբեկ բողոքի նախնական քննության ընթացակարգերը:

5. Վճռաբեկ բողոքների նախնական քննության տարբերակված դատավարական ձևի նախատեսումը Վճռաբեկ դատարանի գործունեության արդյունավետության բարձրացման եղանակներից մեկն է: Վարույթ ընդունելու պարզեցված ընթացակարգ պետք է նախատեսել այն բողոքների համար, որոնցում բարձրացված իրավունքների խախտման հարցն արդեն իսկ լուծվել է Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով (առկա են նույն հարցի վերաբերյալ ուղղորդող որոշումներ (Եվրոպական դատարանի օրինակով՝ leading cases)):

6. Հաշվի առնելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու Վճռաբեկ դատարանի հայեցողությունը և այն, որ վարույթ կարող է ընդունել միայն օրենքով սահմանված որակական խիստ պահանջներին բավարարող բողոքը, ինչը կարող

է ապահովվել միայն մասնագիտական հատուկ գիտելիքներ ներդնելու պարագայում՝ վճռաբեկ բողոքարկման՝ դրանով պայմանավորված նաև դատական պաշտպանության իրավունքի իրացման երաշխիք կարող է լինել քրեական դատավարության այս փուլում անձի՝ անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորության նախատեսումը, անգամ եթե նախորդող փուլերում վերջինս անձամբ է իրականացրել իր պաշտպանությունը:

7. Հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի՝ արդարադատության իրականացման (հիմնարար իրավունքների պաշտպանության) և օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթները՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները կանոնակարգելիս նախընտրելի է այն մոդելը, որը նախ՝ Վճռաբեկ դատարանին կտա ապացույցներ գնահատելու հնարավորություն, և երկրորդ՝ թույլ կտա ուղղելու իր իսկ արձանագրած դատական սխալներն այնքանով, որքանով դա թույլ են տալիս ապացույցների գնահատման արդյունքերը՝ ելնելով արդյունավետության և ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջներից:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների նշանակությունն առաջին հերթին այն է, որ հայրենական դատավարական իրավունքում առաջին անգամ մշակվել է վճռաբեկ վերանայման ինստիտուտի գործնական խնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված համալիր աշխատանք: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան որևէ կերպ առնչվում է վճռաբեկության ինստիտուտի ուսումնասիրությանը: Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության մեջ, ինչպես նաև նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են գեկույցների և ամբիոնում ներկայացված գիտական հաղորդումների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 10 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառնական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Վճռաբեկության էությունը, տեղը և դերը դատական վերանայման համակարգում» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Վճռաբեկության իրավական բնույթը» վերտառությամբ, հեղինակը, հիմնվելով տեսական աղբյուրների վրա, վերլուծում է վճռաբեկության հասկացությունը՝ վեր հանելով վերնայման այս ձևի բնութագրական հատկանիշները, որոնցով այն տարբերվում է դատական ակտերի վերանայման մյուս ձևերից, ներկայացնում է վճռաբեկության մաքուր և խառը մոդելները՝ քննարկման առարկա դարձնելով ֆրանսիական վճռաբեկությունը, խորհրդային և գերմանական ռևիզիան: Արդյունքում հեղինակը եզրահանգում է, որ վճռաբեկ վերանայման մեխանիզմը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև, ի տարբերություն դատական ակտերի վերանայման մյուս ձևերի, բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- 1) այն դատական ակտերի վերանայման հայեցողական ձև է.
- 2) այն ենթադրում է վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայում.
- 3) այն ենթադրում է դատական ակտերի վերանայում սուկ իրավունքի հիմքով.
- 4) ունի հատուկ նպատակային նշանակություն՝ ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Քննարկվող պարագրաֆի շրջանակներում հեղինակն անդրադառնում է վճռաբեկության՝ որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլի կառուցվածքին՝ առանձնացնելով վճռաբեկ բողոքարկման և բողոքի նախնական քննության (պարտադիր ենթափուլ) և բողոքի ըստ էության քննության (ֆակուլտատիվ ենթափուլ, քանի որ այս ենթափուլ բողոքն անցնում է միայն այն վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու դեպքում) ենթափուլերը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Վճռաբեկ վերանայման խնդիրները: Վճռաբեկության գործառութային դերը դատական վերանայման համակարգում» վերտառությամբ, հեղինակը վճռաբեկության՝ արդարադատության և օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթների շրջանակում քննարկում

է դատական սխալների ուղղման և միասնական դատական պրակտիկայի ապահովման խնդիրները, դրանց հարաբերակցության հարցը: Ներկայացնելով օրենքի միատեսակ կիրառության գործառույթի էության վերաբերյալ տեսության մեջ առկա մոտեցումները՝ հեղինակը մանրամասն վերլուծում է «օրենքի միատեսակ կիրառություն» հասկացության հատկանիշները, օրենքի միատեսակ կիրառության ապահովման մեխանիզմի տարրերը: Քննարկման առարկա դարձնելով անգլոսաքսոնական և ռոմանագերմանական իրավական ընտանիքների շրջանակներում բարձրագույն դատական աստյանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման շրջանակներում դատական իրավաստեղծագործության հնարավորության վերաբերյալ տեսաբանների մոտեցումները՝ հեղինակը եզրահանգում է անում Վճռաբեկ դատարանի կողմից դատական իրավաստեղծագործության շրջանակներում օրենսդրական բացերի լրացման իրավաչափության մասին:

Վերլուծության առարկա դարձնելով բարձրագույն դատական աստյանի դերն ու նշանակությունը՝ հեղինակը եզրահանգում է, որ ուսումնասիրված ռոմանագերմանական իրավական ավանդույթների շրջանակներում դատական իշխանության մարմինների համակարգի բարձրագույն օղակները հանդես են գալիս առավելապես որպես իրավունքի դատարան և իրավասու են վճռաբեկության կամ ռևիզիայի կարգով (որն, ըստ էության նույն, ուղղակի փոքր ինչ ձևափոխված վճռաբեկությունն է), վերանայել ստորադաս դատարանի կայացրած դատական ակտերը: Ընդ որում, նույն ռոմանագերմանական իրավական ավանդույթի և նույնիսկ ֆրանսիական մոդելի շրջանակներում աստիճանաբար ընդգծվում է բարձրագույն դատական աստյանների կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման (իրավունքի զարգացման) գործառույթի իրականացման կարևորությունը: Ամփոփելով հեղինակը դիտարկում է անում առ այն, որ գործող Օրենսգրքով նախատեսված՝ դատական վերանայման վերաքննություն-վճռաբեկություն դասական մոդելը, երբ առաջին աստյանի դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող են փաստի և իրավունքի հիմքով բողոքարկվել վերաքննիչ դատարան, իսկ վերաքննիչ դատանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը՝ իրավունքի հիմքով Վճռաբեկ դատարան, կարող է իրապես ծառայել դատական պաշտպանության և դատական վերանայման սահմանադրական իրավունքների լիարժեք իրականացմանը, սակայն դատական տարբեր աստյանների գործառույթային դերի և նշանակության, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի որոշակի հստակեցման պայմանով: Հեղինակը դիտարկում է անում այն մասին, որ Վճռաբեկ վերանայման մատչելիության սահմանափակման իրավաչափության գրավական կարող է լինել ստորադաս դատարանների գործունեության արդյունավետության բարձրացումը և ստորադաս դատարանների գործունեության մեջ գործերի քննության և լուծման արդյունավետ մեխանիզմների, մարդու հի-

մանարար իրավունքների և ազատությունների ապահովման գործուն երաշխիքների ներդրումը, ինչն ինքնին կարող է Վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման օբյեկտիվ մեխանիզմ լինել և որոշակիորեն մեղմել նաև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգի առնչությամբ գործնականում առկա դժգոհություններն ու մերժողական մոտեցումները:

Երկրորդ գլուխը՝ «Վճռաբեկ բողոքարկումը և վճռաբեկ դատարանում բողոքի նախնական քննությունը» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Վճռաբեկ բողոքը՝ որպես վճռաբեկ վարույթի հիմք: Վճռաբեկ բողոքարկման հասկացությունը և նշանակությունը» վերտառությամբ, հեղինակը, վերլուծելով տեսական գրականության մեջ տեղ գտած մոտեցումները, փորձ է անում սահմանել «վճռաբեկ բողոք» և «վճռաբեկ բողոքարկում» հասկացությունները, վեր հանել դրանց դատավարական նշանակությունը՝ առաջինը դիտարկելով որպես վճռաբեկ վարույթի հիմք, իսկ երկրորդը՝ վճռաբեկ վարույթի ծագման նախադրյալ: Հեղինակն անդրադառնում է նաև «վճռաբեկ բողոքարկման իրավունք» և «վճռաբեկ բողոքարկման ազատություն» հասկացությունների հարաբերակցությանը՝ իր անհամաձայնությունն արտահայտելով տեսական գրականության մեջ տեղ գտած այն կարծիքներին, որ վճռաբեկ բողոքարկման ազատությունը, ի տարբերություն վճռաբեկ բողոքարկման իրավունքի, որն անձի դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մասն է և որը սահմանափակման ենթակա չէ, վճռաբեկ բողոքարկման ազատությունը բացարձակ բնույթ չի կրում: Այնուհետ հեղինակը վերլուծում է վճռաբեկ բողոքի ձևին և բովանդակությանն օրենքով ներկայացվող պահանջները՝ եզրահանգելով, որ դրանց դերն ու նշանակությունը հանգում է վճռաբեկ բողոքարկման իրավունքի սահմանափակումները պահպնված լինելը փաստելուն:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Վճռաբեկ բողոքարկման առարկան և ժամկետները» վերտառությամբ, հեղինակը նախ՝ ներկայացնում է վճռաբեկ բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի շրջանակը, քննարկում է դատավճռից անկախ՝ վճռաբեկ բողոքարկման ենթակա գործն ըստ էության չլուծող դատական ակտերի տեսակները որոշելու չափանիշները՝ հիմք ընդունելով տեսական գրականության մեջ տեղ գտած մոտեցումները, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումները: Ջարգացնելով դատավորների անկախության և դատական պաշտպանության սկզբունքների միջև փոխզիջում ապահովելու անհրաժեշտության մասին տեսաբանների մոտեցումները՝ հեղինակը եզրահանգում է, որ դատավճռից անկախ՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել, երբ անձի խախտված իրավունքների ամբողջ

ծավալով վերականգնումը Վճռաբեկ դատարանի կողմից անգամ գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանելուց հետո կարող է խնդրահարույց կամ անհնարին լինել, և եթե դա չի խոչընդոտի ստորադաս դատարանում գործի ողջամիտ ժամկետում քննությանը:

Ապա հեղինակն անդրադառնում է վճռաբեկ բողոքարկման ժամկետներին, դրանց հաշվարկման կարգին: Հաշվի առնելով վճռաբեկ բողոքարկման ժամկետների հաշվարկման սկզբնապահի վերաբերյալ Եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի որոշումները և գործնականում դրա տարաբնույթ մեկնաբանությունները՝ հեղինակը ննախընտրելի է համարում գործող Օրենսգրքում և Նախագծում դատական ակտի՝ սատացման պահից բողոքարկման ժամկետներ հաշվարկելու պահանջի նախատեսումը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Վճռաբեկ բողոքարկման սուբյեկտները» վերտառությամբ, հեղինակը վերլուծում է վճռաբեկ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների կողմից նշված իրավունքի իրացման ընդհանուր և հատուկ պայմանները: Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները բացառապես փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի իրավաչափության վերաբերյալ՝ հեղինակը եզրահանգում է, որ նման պահանջի նախատեսումը վճռաբեկ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման օբյեկտիվ անհրաժեշտություն է՝ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու ընթացակարգերի հստակեցման պայմանով: Ըստ այդմ, հեղինակը քննարկման առարկա է դարձնում վերաքննիչ դատարանի միջոցով գործով վարույթին փաստաբան ներգրավելու կարգավորման նախատեսումը: Հեղինակը հատուկ անդրադառնում է նաև բացառապես Գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների կողմից վճռաբեկ բողոք բերելու պահանջին՝ եզրահանգում անելով դրա իրավաչափ լինելու մասին:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Վճռաբեկ բողոք բերելու և բողոքի նախնական քննության դատավարական կարգը» վերտառությամբ, հեղինակը քննարկում է վճռաբեկ բողոք բերելու և դրա նախնական քննության ընթացակարգերը, վճռաբեկ բողոքը վերադարձնելու, այն առանց քննության թողնելու, վարույթ ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու հիմքերը: Ընդհանուր առմամբ դրական գնահատելով վճռաբեկ բողոքը ժամկետով վերադարձնելու հիմքերի հստակեցումը՝ հեղինակը վեր է հանում նշված ինստիտուտի գործնականում կիրառման արդյունքում առաջացած և օրենսդրական լուծում չստացած խնդիրները: Այնուհետև հեղինակն անդրադառնում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական հիմքերին, գործող Օրենսգրքում դրանց օրենսդրական ձևակերպումների զարգացումներին, ինչպես նաև Նախագծի կարգավորումներին՝ հիմնավորելով վերջիններիս համապա-

տասխանությունը վճռաբեկության գործառույթների հարաբերակցությանը: Հեղինակը քննարկման առարկա է դարձնում նաև բողոքարկման հիմքերի և բողոքը վարույթ ընդունելու պայմանների հարաբերակցության հարցը: Վճռաբեկ դատարանի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով հեղինակը առաջարկում է նաև առանձին դեպքերում բողոքի նախնական քննության պարզեցված ընթացակարգեր ներդնել, երբ բողոքում բարձրացված հարցին Վճռաբեկ դատարանն արդեն իսկ բազմիցս անդրադարձել է իր նախկին որոշումներում: Դատական պաշտպանության իրավունքի մատչելիության իրավունքի ապահովման շրջանակներում հեղինակը քննարկման առարկա է դարձնում նաև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների պատճառաբանության խնդիրը՝ առաջարկելով խնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ:

Երրորդ գլուխը՝ «Բողոքի ըստ էության քննությունը Վճռաբեկ դատարանում» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Վճռաբեկ դատարանում բողոքի քննության դատավարական կարգը: Վճռաբեկ վերանայման սահմանները» վերտառությամբ, հեղինակը վերլուծում է Վճռաբեկ դատարանում վարույթ ընդունված բողոքի քննության նախապատրաստման և դատական նիստում բողոքի քննության դատավարական կարգը՝ արձանագրելով համապատասխան դատավարական հարաբերությունների համալիր օրենսդրական կարգավորման բացակայությունը: Քննարկման առարկա դարձնելով գործնականում հանդիպող այն դեպքերը, երբ բողոքը վարույթ ընդունելուց հետո այն դատական նիստում քննվել է 4 կամ 5 ամիս անց, հեղինակն առաջարկում է նախատեսել բողոքը վարույթ ընդունելուց հետո մեկամսյա ժամկետում դատական նիստ նշանակելու մասին առանձին որոշում կայացնելու դատավարական կարգ, մանավանդ, որ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու համար օրենսդիրն արդեն իսկ սահմանում է եռամսյա ժամկետ: Այա հեղինակը մանրամասն քննարկում է բարձրագույն դատական ատյանի կողմից գործի ըստ էության նոր քննություն իրականացնելու կամ ընդհակառակը վերանայման սահմանները բացառապես բողոքի հիմքերով և հիմնավորումներով կանխորոշելու օրենսդրական կարգավորումներին՝ վեր հանելով հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության տեսանկյունից դրանց խիստ ծայրահեղական լինելու հանգամանքը: Ըստ այդմ, հիմք ընդունելով նաև քննարկվող խնդրի առնչությամբ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները՝ հեղինակը հիմնավորում է օրենքով հստակ սահմանված հատուկ հիմքերի առկայության պարագայում բողոքի սահմաններից դուրս գալու կարգավորման իրավաչափությունը:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտ կայացնելու կարգը: Դատական ակտի բեկանման և փոփոխման

հիմքերը» վերտառությամբ, հեղինակը նախ՝ քննարկում է Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտ կայացնելու կարգը, Վճռաբեկ դատարանի որոշումների ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Ապա, հեղինակն անդրադառնում է դատական ակտի բեկանման և փոփոխման վճռաբեկ հիմքերին, դրանց հարաբերակցությանը բողոքարկման հիմքերի հետ: Նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառության հիմքի՝ գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված հետևությունների՝ ստորադաս դատարանում հետազոտված ապացույցներին անհամապատասխանության վերաբնիչ հիմքի հետ փոխկապակցվածությամբ պայմանավորված՝ հեղինակը քննարկման առարկա է դարձնում Վճռաբեկ դատարանում ապացույցների հետազոտման գործընթացի տարրերի առկայության հարցը՝ եզրահանգում անելով առնվազն ապացույցների գնահատում իրականացնելու անհրաժեշտության և դրա իրավաչափության մասին:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Վճռաբեկ դատարանի լիազորությունները» վերտառությամբ, հեղինակը մանրամասն վերլուծում է գործող Օրենսգրքով և Նախագծով սահմանված՝ դատական ակտ կայացնելիս Վճռաբեկ դատարանի լիազորությունները: Հեղինակը քննարկման առարկա է դարձնում նաև առանձին լիազորությունների օրենսդրական կարգավորման իրավաչափությունը դատավարական խնայողականության ապահովման և դատական ակտերի անվերջ շրջապտույտի բացառման տեսանկյունից: Հեղինակն անդրադառնում է նաև Վճռաբեկ դատարանի կողմից արարքի իրավական գնահատականը փոխելու, պատժի մասով դատական ակտը փոփոխելու խնդիրներին: Հեղինակը քննարկման առարկա է դարձնում նաև այն խնդիրը, որ գործնականում եղել են դեպքեր, երբ Վճռաբեկ դատարանի որոշումներն ուղարկվել են դատական նիստից մինչև չորս կամ ավելի ամիս անց, և քանի որ վարույթ ընդունված բողոքը դատական նիստում քննության առնելու հստակ ժամկետներ ևս օրենքով նախատեսված չեն, գործնականում չի բացառվել, որ Վճռաբեկ դատարանի որոշումը շահագրգիռ անձանց ուղարկվել է բողոքը դատարանում ստացվելու պահից մոտ մեկ տարի անց: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ առաջարկվել է նախատեսել Վճռաբեկ դատարանի որոշումը դատավարության մասնակիցներին եռամսյա ժամկետում ուղարկելու պահանջ:

Ատենախոսության եզրակացություններում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները:

1. Վճռաբեկ վերանայումը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև, կարելի է բնորոշել որպես ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերանայման հայեցողական ձև, որի արդյունքում վճռաբեկ ատյանը, նպատակ ունենալով ուղղելու դատական սխալները և ապահովելու օրենքի

միատեսակ կիրառությունը, ստուգում է ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը՝ նյութական իրավունքի նորմի ճիշտ կիրառման և դատավարական իրավունքի նորմերի պահանջների պահպանման տեսանկյունից:

2. Վճռաբեկությունը քրեական դատավարության ինքնուրույն փուլ է՝ կազմված վճռաբեկ բողոքարկման և բողոքի նախնական քննության (պարտադիր ենթափուլ) և բողոքի ըստ էության քննության (ֆակուլտատիվ ենթափուլ, քանի որ այս ենթափուլ բողոքն անցնում է միայն այն վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու դեպքում) ենթափուլերից:

3. Գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բովանդակային տարբերությամբ պայմանավորված՝ միանգամայն իրավաչափ է վերջին դեպքում բողոքարկման պարզեցված ընթացակարգի նախատեսումը: Մինչև ժամանակ, նման տարբերակումը հնարավոր է ոչ թե վերանայման հատուկ ձև առանձնացնելու, այլ վճռաբեկության շրջանակներում բողոքարկման և վերանայման ընթացակարգերը տարանջատելու եղանակով: Թե գործն ըստ էության և թե գործն ըստ էության չլուծող դատական ակտերի՝ վճռաբեկ ատյանում վերանայման պարագայում պահպանվում են դատական ակտերի վճռաբեկ վերանայման ձևի այնպիսի բնութագրական առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ դատական ակտերի վերանայումը սուկ իրավունքի հիմքով և վերանայման հայեցողական բնույթը:

4. Որպես ընդհանուր կանոն՝ դատական քննության ընթացքում կայացված գործն ըստ էության չլուծող դատական ակտերը պետք է բողոքարկվեն դատավրճուռի հետ միասին՝ երաշխավորելու համար դատարանների ներքին անկախությունը: Այս կանոնից իրավաչափ բացառություն կարող են համարվել այն դեպքերը, երբ անձի խախտված իրավունքների ամբողջ ծավալով վերականգնումը Վճռաբեկ դատարանի կողմից անգամ գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանելուց հետո կարող է խնդրահարույց կամ անհնարին լինել, և եթե դա չի խոչընդոտի ստորադաս դատարանում գործի ողջամիտ ժամկետում քննությանը:

5. Դատական քննության փուլում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու, գործն ըստ ընդդատության ուղարկելու և դռնփակ դատական նիստ անցկացնելու մասին որոշումների բողոքարկման իրավաչափ մոդել կարող է լինել հետաձգված բողոքարկման կառուցակարգը: Դրա հետ մեկտեղ պետք է նախատեսել դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշման՝ դատավճռից անկախ, ինքնուրույն բողոքարկման կառուցակարգ:

6. Անհրաժեշտ է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու կարգավորումները հստակեցնել այն առումով, որ այդպիսիք տարածվեն նաև վերաքննիչ և վճռաբեկ վարույթի վրա, իսկ Օ-

րենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսել օրենսդրական կարգավորում, համաձայն որի՝ համապատասխան անձինք վերաքննիչ դատարանի դատական ակտի հրապարակման պահից իրավունք կունենան միջորդություն ներկայացնել վերաքննիչ դատարան վճռաբեկ բողոք ներկայացնելու համար գործով վարույթին փաստաբան ներգրավելու մասին, որը պետք է քննության առնվի և լուծվի եռօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան վերաքննիչ դատարանի դատական ակտը դատավարության մասնակիցներին ուղարկելը: Անհրաժեշտ է նաև նախատեսել, որ միջնորդությունը պետք է քննության առնվի և լուծվի անհապաղ, եթե վերաքննիչ դատարանի դատական ակտն արդեն ուղարկվել է դատավարության մասնակիցներին.

7. Վճռաբեկ բողոքարկման իրավունքը ոչ թե մեղադրողին, այլ բացառապես Գլխավոր դատախազի կամ նրա տեղակալներին վերապահելու կարգավորումը միանգամայն համահունչ է երկրի բաձրագույն դատական ատյանի կողմից իրականացվող վճռաբեկ վերանայման առանձնահատկություններին, մասնավորապես օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթին: Դա նպատակ ունի ապահովելու ՀՀ գլխավոր դատախազության կողմից պատշաճ, այսպես կոչված, ընտրողական քաղաքականության իրականացումն այն հաշվով, որ վճռաբեկ ատյան հասնեն միայն այն գործերը, որոնցով բարձրացված իրավական խնդիրները համահունչ են Վճռաբեկ դատարանի՝ որպես բարձրագույն դատական ատյանի դերին ու կոչմանը:

8. Անհրաժեշտ է Նախագծի 362-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանել, որ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար նշանակություն ունեցող վճռաբեկ բողոքը հետ վերցնելու միջնորդությունը մերժելու դեպքում այդ բողոքի քննության արդյունքում անձի վիճակը չի կարող վատթարացվել.

9. Անհրաժեշտ է Օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 5-րդ մասում և Նախագծի 388-րդ հոդվածում նախատեսել այնպիսի օրենսդրական կարգավորում, համաձայն որի՝ եթե կրկին ներկայացված վճռաբեկ բողոքում բացի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները շտկելուց, լրացվել են նաև բողոքի հիմքերն ու հիմնավորումները, ինչպես նաև բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները, ապա վճռաբեկ դատարանի կողմից քննվում են սկզբնական բողոքի հիմքերն ու հիմնավորումները, իհարկե բացառությամբ այն դեպքերի, երբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է հիմքերի և հիմնավորումների բացակայության հիմքով.

10. Դատական ակտի բեկանման և փոփոխման վճռաբեկ հիմքերը վճռաբեկ բողոքում նշված և բողոքի քննության արդյունքում հաստատված նյութական կամ դատավարական իրավունքի այն խախտումները կամ նոր կամ նոր երևան եկած այն հանգամանքներն են, որոնք ազդել են գործի ելքի վրա:

11. Անհրաժեշտ է Օրենսգրքում և Նախագծում նախատեսել Վճռաբեկ դատարանի որոշումը եռամսյա ժամկետում դատավարության մասնակիցներին ուղար-

կելու պահանջ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ռուբեն Մելիքյան, Տաթևիկ Սուջյան, Դատական վերանայման հիմնահարցերի կանոնակարգումը ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում // Պետություն և իրավունք, թիվ 1(59) 2013, Երևան, էջեր 32-45:

2. Գագիկ Ղազինյան, Տաթևիկ Սուջյան, Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի օրենսդրական կանոնակարգման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում // Պետություն և իրավունք, թիվ 2(64), Երևան, 2014, էջեր 5-15:

3. Տաթևիկ Սուջյան, Վճռաբեկության սահմանները հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության համատեքստում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., 2014, էջեր 249-267:

4. Տաթևիկ Սուջյան, Վճռաբեկ դատարանի լիազորությունների օրենսդրական կանոնակարգման տեսական և գործնական հիմնախնդիրները // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., 2015, էջեր 393-415:

5. Տաթևիկ Սուջյան, Վճռաբեկության՝ որպես դատական ակտերի վերանայման ձևի (մեխանիզմի) իրավական էությունը // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., 2016, էջեր 504-531:

6. Гагик Казинян, Татевик Суджян, Функция обеспечения единообразного применения закона в рамках кассации (правовая сущность и механизм осуществления) // Պետություն և իրավունք, N 2 (72), Երևան, 2016, էջեր 110-120:

СУДЖЯН ТАТЕВИК ОГАНЕСОВНА
КАССАЦИЯ КАК ФОРМА ПЕРЕСМОТРА СУДЕБНЫХ АКТОВ В
УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

Существование объективных и субъективных предпосылок допущения судебных ошибок при принятии решений и возможность составления судебного акта не соответствующего требованиям законности и обоснованности делает существование различных форм судебного рассмотрения объективной необходимостью. Среди различных форм судебного пересмотра уникальное место занимает кассация, функциональная роль которой сводится не только к задаче исправления судебных ошибок, но и обеспечения единообразного применения закона. И само соотношение данных функций и задач кассации является предметом различных толкований среди академического сообщества и практикующих юристов. Необходимость изучения на научном уровне функциональной роли кассации и уточнения ее задач, предложения законодательных урегулирований обеспечивающих разумный баланс данных задач актуализирует настоящее исследование. Актуальность изучения данного института так же обусловлена необходимостью вскрытия и исключения недостатков и пробелов действующего законодательства, анализа впервые на научном уровне установленных Проектом нового Уголовно-процессуального Кодекса РА упорядочений.

Следует отметить, что в отечественной юриспруденции институт кассации все еще недостаточно изучен. И в данном исследовании автор пытается всесторонне проанализировать институт кассации.

Автор прежде всего обсуждает правовую сущность кассации как формы пересмотра судебных актов и ее структуру как стадии уголовного процесса. Основываясь на существующих в теории мнениях процессуалистов автор подробно анализирует признаки кассации отличающих ее от других форм пересмотра судебных актов. Далее автор обсуждает вопрос соотношения задач исправления судебных ошибок и обеспечения единообразного применения закона на основе разделяющихся мнений теоретиков. В конце автор приходит к выводу, что несмотря на мнение многих процессуалистов данные задачи не исключают, а наоборот дополняют друг друга. Изучив задачи поставленные перед кассацией и роль Верховного суда в странах Общего права и

Континентального права автор так же делает попытку уточнить роль кассации в системе судебного пересмотра.

Автор анализирует правовые регулирования предмета кассационного уточная критерии частного обжалования и круг судебных актов не разрешающих дело по существу, которые могут быть обжалованы вне зависимости от приговора.

Автор так же анализирует общие и специальные предпосылки осуществления права кассационного обжалования. Опираясь на правовые позиции Конституционного и Европейского суда автор приводит к выводу, что требование о подачи кассационной жалобы через адвоката объективно необходимо для эффективной реализации права на кассационное обжалование с условием уточнения процедур предоставления правовой помощи на данной стадии. Автор также анализирует требования подачи кассационной жалобы исключительно Генеральным прокурором или его заместителем делая вывод о правомерности данного урегулирования.

Обсуждая вопросы связанные с процедурой изначального обсуждения кассационной жалобы автор детально анализирует теоретические и практические вопросы связанные с дискреционными полномочиями Кассационного суда принимать кассационные жалобы на рассмотрение. В результате автор обосновывает соответствие урегулирований предусмотренных в Проекте оснований принятия жалобы на рассмотрение балансирования задач кассации. Автор изучает возможность внедрения упрощенных процедур рассмотрения конкретных жалоб. Кроме того, автор делает предметом рассмотрения проблему обоснования решений об отказе принятия жалоб на рассмотрение.

В конце Автор изучает процедуру рассмотрения жалобы в судебном заседании Кассационного Суда выявляя конкретные пробелы в законе. Автор так же изучает вопросы полномочий Кассационного суда и процесса доказывания в Кассационном Суде.

TATEVIK SUJYAN
**CASSATION AS A FORM OF JUDICIAL REVIEW IN THE RA CRIMINAL
PROCEDURE**

The objective and subjective prerequisites of making judicial mistakes in decision-making process and thereof the possibility of holding a judicial act not corresponding to the requirements of legality and validity make the existence of different forms of judicial review an objective necessity. Among the various forms of judicial review the cassation takes a unique place. The functional role of the cassation is not only correcting the miscarriages of justice, but also ensuring the uniform application of the law. And the relationship of these functions and tasks of cassation is itself the subject of different interpretations among academics and legal practitioners. The need to study and clarify the functional role and objectives of cassation at a scientific level, and to propose settlements providing a reasonable balance of these issues actualizes current study. The relevance of the study is also due to the need to reveal and eliminate the gaps and shortcomings of current legislation, to analyze the regulations established by the Project of the new Criminal Procedure Code of the RA at the scientific level.

It should be noted that the institute of cassation are still not sufficiently examined in domestic jurisprudence. In this study, the author attempts to comprehensively analyze the institute of cassation.

The author mainly discusses the legal nature of cassation as a form of judicial review and its structure as a stage of the criminal process. Based on opinions existing in theory the author analyzes in detail the main features of appeal distinguishing it from the other forms of judicial review. The author discusses the issue of relation of objectives of correcting miscarriages of justice and ensuring the uniform application of the law on the basis of dissenting opinions of the theorists. At the end the author concludes that, despite the theoretical opinions these tasks do not exclude each other. Within analyze of the role of the Supreme Court in the Case-law and Civil law systems the author makes an attempt to clarify the role of cassation in the system of judicial review.

The author analyzes the legal regulation of the subject of the cassation appeal and specifies the criterias and the terms of the appeal of judicial acts not deciding a case on the merits. The author also analyzes the general and special conditions to exercise the right of appeal. Based on the legal positions of the Constitutional Court

and the European Court the author comes to the conclusion that the requirement of filing a complaint through a lawyer is necessary for the effective implementation of the right to a cassation appeal in case of clarification of legal assistance procedures at this stage. The author also analyzes the legitimacy of the requirement of filing a cassation appeal only by the Prosecutor General or his deputy.

Within the discussion of the issues relating to the procedure of the initial discussion of the cassation appeal the author analyzes in detail the theoretical and practical issues regarding the discretionary powers of the Court of Cassation to admit the cassation appeals. The author also suggests the possibility of simplified procedures of discussion of specific complaints. In addition, the author turns to the issues of substantiation of the decisions to refuse the admission of complaints.

At the end the author examines the regulations of the hearings at the Court of Cassation revealing specific gaps in the law. The author also examines the liabilities of the Cassation Court and the possibility of evidentiary process at the hearings.